



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

թիւ 15.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍ ՀՆԳԵՏԱՍԱՆՆԵՐՈՐԴ

20 ԳԵՆՏԵՄԲԵՐ 1870



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Տ. ՄԻԻԼԻՆՏԻՍԵԱՆ

— 1870 —

ՄԱՍԻՆՈՒՄ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՅՈՒՐՈՐՈՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

1870 ՄԱՍԻՆՈՒՄ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

1870 ՄԱՍԻՆՈՒՄ



ՄԱՍԻՆՈՒՄ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

1870

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԺԵ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1870

ՆԱՍՏԱՅԱՆՔ: — Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ (ԱՐԺԱՄԱՆԱԿԵԱՅ ԿԱՐԳԵԱԼ)

ԱՏԵՆԱՊԵՏ: — ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ (ԱՐԺԱՄԱՆԱԿԵԱՅ ԿԱՐԳԵԱԼ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

- 1. Վաւերացումն ատենագրութեանց Ը. Ե. Թ. նիտոերուն:
- 2. Վերաբնութիւն ԱնՏՄ. — Գլուխ թաղական մատակարարութեան:
- 3. Ներքին կանոնագրութիւն Ընդհ. ժողովին, կամ Ատենական կանոնք:

Բաց Վի Քոխատենագրութեանց Վերեւմ—Գուլի էֆ. է, Իււանին միւս բոլոր անդամները՝ Ատենագրութեան, Քոխատենագրութեան և Ատենագրութեան Գրաստանի միանգամայն բացակայ կը գտնուէին, ուստի ժողովը բաւական սպասելէ՛ յետոյ արժան դատեց անդամոց երկուսունին՝ առժամանակեայ ատենագրութեամբ ատենար բանալ, ինչպէս օրէն է սահմանադրապէս, և օրվան կարգին չանցած նկատողութեան առնուլ Իււանի անդամոց մեծադոյն մասին բացակայութիւնը, և յուզել նետեարար Իււանի այս վիճակին բարեկարգութեան խնդիրը:

Եկեղեցական ու աշխարհական դասէն տարիքով երկուսոցն անդամներ յիշվեցան, որք վերջապէս միահամուռ Ղազարոսեան Քրիստոստար էֆ. ի տեղի տուին այս պաշտօնը վարելու: Նետեարար Ղազարոսեան էֆ. ժողովոյ հրաւիրմանց վրայ ատենագրութեան անցնելով ատենար բացաւ ժամ 7 1/2 ին ի ներկայութեան 30 երեսփոխանաց, որոց թիւն ի վերջոյ Վի յանդեցաւ, առանց մեծադոյն մաս դոյանալու:

Ատենագրութեան էֆ. նիւանդութեան պատճառաւ

և ազդարարութեամբ բացակայ երեսփոխանաց անունները յիշելէ ետքը՝ Ատենագրութեան Թոնան էֆ. ի մէկ նամակը մէջ բերաւ, որ նմանապէս նիւանդութեան պատճառաւ այսօրեայ ժողովէն բացակայ մնալու հարկադրիլը կը ծանուցանէր: Յետոյ Ատենագրութեան էֆ. Կապուտիկեան Տ. Յովհաննէս Եպիսկոպոսի կողմէ ուղղեալ նամակ մ'ընթերցաւ, որ երեսփոխանական պաշտօնէ կը հրաժարէր, իւր անձնական վատառողջութիւնը պատճառ ցոյց տալով:

ՈՍԿԱՆ Յ. էՖ. — Այդ հրաժարականին վրայ տեղեկութիւն մը տալու մտօք կը յայտնեմ թէ՛ Վեր. Կապուտիկեանին պատահեցայ, մինչ զայն գրելու վրայ էր, առաջարկեց ինձ որ ժողովոյ ներողամտութիւնը խնդրեմ իւր հրաժարականին համար, որու պատճառն է եղեր իւր յօդացաւը: Հարցուցի թէ այդ ախտը ո՞ր եկած էր իր վրայ, ոչ ըսաւ. ուրիմն պատասխանեցի, լաւագոյն էր որ կանխաւ հրաժարէիք:

Ատենագրութեան էֆ. յայտնեց թէ այս հրաժարականը որոշման կարօտ խնդիր մ'ըլլալուն ա-

և երբէք էր անոր վրայ խօսիլ, մինչդեռ ժողովոյն օրինական թիւը լրացած չէր. եւ հրաւիրեց ժողովականները Վիւանի վիճակին բարեկարգութեան միջոցներուն վրայ կարծիք յայտնելու :

ՄԱԶԼԸՄԵԱՆ 3. ԷՑ. — Առաջին Ատենապետը հիւանդութեան պատճառաւ եւ ազդարարութեամբ բացակայ կը գտնուի, իսկ երկրորդը պատճառ մը յայտնած չէ. ի հարկէ այս բացակայութիւնը տուժարին մէջ կը նշանակուի, որու դէմ առ այժմ բան մը չ'ունինք ընելու, մինչեւ որ երեք անգամ յաջորդաբար չը պատահի մի եւ նոյն պարագան. բայց պէտք է որ Վիւանը այնպիսի անդամներէ բաղկանայ որ ժողովոյ գործոց արգելք չ'ըլլան պարտադանցութեամբ, եւ բացակայութեան պարագաներու մէջ մէկը միւսին յաջորդէ : Վառաձարկեմ որ այս խնդիրը նախ խնդրոց կարգն անցնի, յետոյ անօրէնութիւն մ'ըլլայ անոր վրայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Պարտ կը համարիմ յիշեցնել որ ֆոխատենապետ էֆ. ասկէ առաջ անգամ մ'ալ թէ եւ բացակայ գտնուած էր ժողովէն, սակայն ատենադ. հրովարտ. միջոցին Վիւանը բացակայութեան պատճառը ծանուցանող հեռագրական նամակ մը հասաւ իրմէ : Հաւանականաբար կրնայ նամակի մը գէշք մը պատահած ըլլայ եւ այսօր :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՑ. — Միայն մէկ Ատենապետ եւ մէկ Ատենադպիր բաւական են ժողովոյ : Ինչու ուրեմն մէկ մէկ ալ փոխանորդ տուեր է անոնց ժողովը. պատճառն այն է որ, երբ կրննք բացակայ գտնուին փոխանորդ փութն անոնց պաշտօնը կը տեսնենք որ Ատենապետ էֆ. իւր բացակայութիւնը ծանուցած է ժողովին, ուստի եւ ֆոխատենապետին պարտքն էր զալ իւր պաշտօնը վարել : Արդ քանի որ իրաց այս վիճակին մէջ ֆոխատենապետը բացակայ կը գտնուի, պէտք է զանի փոխել եւ ուրիշ յարմար անձ մը զնել անոր տեղ :

ԱՅԱՍՏԵԱՆ ՄԱՏ. ԷՑ. — Ես կ'ըսեմ որ փոխանակ այսպէս խօսիլ վարելու, Վիւանին յիշեցնենք իւր պարտաւորութիւնը : Թող Ատենապետ եւ ֆոխատեց քացակայութեան պարտադաներու մէջ ժողովին ծանուցանելէ առաջ փոխադարձաբար իրարու ազդարարութիւն ընեն կանխաւ, որպէս զի երբ մին չը դադու պատճառ մ'ունենայ, մեւսը անհրաժեշտաբար ներ-

կայ գտնուի. վերջապէս երբ ժողովը նիստ պիտի ընէ, պէտք է որ երկուքն իրարու հետ խորհրդակցին եւ ժողովն առանց Ատենապետի չը թողելու : Ճարք նային : Եթէ այս կարգադրութենէն ետեւ դարձեալ նիստերուն ներկայ չ'ըլլայ զանոնք փոխելու :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Անցեալ անգամ երբ Ատենապետութեան վերաբնութեանը վրայ խօսք ուղեցի այս նիստին համար, Օտենան էֆ. ըսաւ թէ՛ առաջին խօսքը ֆոխատենապետինն է, որ ձեռնէ առաջ խօսք ուղեմ է նոյն նիւթին վրայ. ուրեմն պէտք էր որ նա այսօր ներկայ գտնուէր եւ խօսքը զրուցէր : Բայց կը յիշեմ որ երբ ժողովը կիրակի օր նիստ կազմելու որոշում ըրաւ, մենք կիրակի օր չ'ենք կրնար գալ ըսին թէ՛ ինք եւ թէ Ատենադպիր էֆ. եւ քանի որ ժողովը մտադիր է փոխօրինակի ուրբաթ եւ կիրակի նիստ կազմել, կը հետեւի որ ամեն կիրակորեայ նիստերուն չը պիտի գան եւ այն պատեմ չարկ պիտի ըլլայ որ հրատարին :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Կը յիշեմ որ ժողովականներէն մին ուրիշ նիստի մը մէջ առաջարկեց որ, մէկի տեղ երկու ֆոխատենապետ ընտրուի : Երբ Ատենապետներուն թիւը երեքի կը հասնի եւ ասոնցմէ անշուշտ մէկը ժողովոյ ներկայ կը գտնուի. այս կարգադրութիւնը դէռ չ'եմ գտներ ի՞նչ ժողովն ընդունի :

Կիրակի օրերը ժողովը գումարներու թէն էս ալ համարեմ եմ, բայց կը անհետն որ չ'ասեմք եւ մամուռանց եկելոցս համար ֆոխատենապետ չ'է պիտի կրնանք ալ : մինչդեռ ուրբաթ օրերը նիստ կազմելով մեծագոյն մաս կը դոյնեայ միւս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Երեք տեսակ դիտողութեանց միանդամայն պատասխան ունիմ տալու, իբր ժողովական, Նախ Օգտէն էֆ. րոնաձարկութիւնը անձերու կը վերաբերի եւ սկըզբունքի վրայ հիմնեալ չ'է, եւ իբր այն չը կրնար պատասխանել բուն նպատակին : Երկրորդ ֆախատեան էֆ. կ'ըսէ թէ ֆոխատենապետն ու Ատենադպիրը այս ինչ պատճառին համար չ'են կան, այս ալ զուշակութիւն մ'է եւ բացակայութեան բուն պատճառը ինչ որ է, անձանօթ կը մնայ մեզ : Նախագահ Սրբազանի կրկնած առաջարկութեան գալով կարծեմ այնչալ ատենական կանոնաց քննութեան վերաբերեալ կէտ մ'է :

ԱԼԱՃԱՃԵԱՆ Է. ԷՑ. — Ընդունայն ժամանակ կ'անցընենք այսօր, պէտք է խնդրոց կարգին

անցնենք, յաջորդ նիստին թողովը Վիւանի բաւականութեամբ խնդրուի ըսող : Սրբազանս : ՄԱՆԱՆ 3. ԷՑ. — Երբ իսկ պէտք է առանց ժամանակ անցընելու հիմնական անօրէնութիւն մ'ընել, սրբապետն անոնք նիստին Վիւանական խնդիրը երեւոյն երեսուրթ թողուի ժամանակ այսպէս չ'արարին :

ԱՍԱՆ 3. ԷՑ. — Կարողա՞նք Սրբազան կ'առաջարկէ որ երեք ֆոխատեց փոխան, որպէս զի երկուքը պակասած ատեն զէթ երկրորդ ներկայ գտնուի : Արի երեսուրթսանաց ներկայութեան թիւը պակասեցնելու ճանկայ մ'է : Երբ ընդհանուր հաշուով երեքէն երկուք բացակայ մնան, բնական մեծագոյն մաս չ'ենք կրնար ունենալ : Նախադանք Սրբազանը կրնայ երաշխատել մեզ թէ գալ չարթու ընդ հիմնարկութիւն մը չը պիտի ծնայի եւ ժողովն իւր սահմանագրական ընթացքը սիրով կարեւոր պահել : Պէտք է մենք միտեմք ան հարցին, ինչպէս ամէկից տեսլք քանակ եմ, երեսուրթսանութիւնն ու իր պատճառներն երբուեալ ըլլալու են :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Այս ամեն անգամ պատահած բան չէ որ Վիւանի անդամոց մեծագոյն մասը բացակայ ըլլալու չ'ապագա ըլլաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Վիւանի անդամոց մեծագոյն մասը բացակայութիւնը ատենան ըսած հարց համար ֆոխատենապետի փոխուի պատճառաւ, ժողովը զայն նկատողութեան առում, եւ երկու մասը արկութիւն երկուսն եւ կան, յորոց մին ատենապետի եւ ատենադպիր փոխանորդներուն թիւը երկուքի վերածել, եւ միւսը զանցաւ օրինակ ընտրութեան էր : Առանց խօսելու ընկերակցոց բացակայութեանց պատճառներուն վրայ, պէտք է որ կարծիք թէ արդարեւ ճիշդ հանգամանքներէ զտրել ըլլան կ'ըսել թէ ժողովը սոյն երկու մասը արկութեանց որուն ալ չարի, անհարկի է այժմ օրինաւոր որոշման տակ զնել զայն. քանի որ մեծագոյն մաս չ'ըլլայ, ուստի ամենէն կորուկ միջոցն է խնդրոց կարգն անցնել այս խնդիրը եւ ընդունայն ժամանակաւ չ'ըլլալ :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՑ. — Ատենապետ էֆ. կ'ըսէ թէ սոյն վիճակը ամեն անգամ չը պատահիր, մինչդեռ ընդհանրապէս քանի չարթի է Վիւ ֆոխատենապետ էֆ. քացակայ կը գտնուի եւ Ռուսիական էֆ. կը վարէ անոր պաշտօնը : Մեր այս թող ընթացքը Վիւանի անդամոց բացակայութիւնը կը քաջալերէ :

Ինչպէս ժողովական մը զիտէ որ երբ ժողովը չ'երթայ, մեծագոյն մաս չը դոյնանալու

պատճառ մը տուած կ'ըլլայ, նոյնպէս ալ Վիւանի անդամը պէտք է գիտնան որ եթէ իրենք ալ բացակայ գտնուին, ատենան չը կրնար ըստ լի : Իսկ երկրորդուն ընտրութեան դադով զիտել կ'ուտամ որ Ատենապետութեան այդ օրէնքը այն ատենին համար է, երբ զեռ ժողովը Վիւանը չ'է կազմեալ, որպէս զի ատենան բացվի եւ Վիւան կազմվի : Արդ եթէ Վիւան ունի ժողովս, պէտք էր որ ատենան բացօղ մ'ունենայինք այսօր, եւ քանի որ չ'ունինք, մեր պարտքն է հիմնական դարման տանիլ անմիջապէս այս վիճակին, ապա թէ ոչ ձեռնառնայն ցրուելէ զատ դորձ չ'ունինք :

ԱՅԱՍՏԵԱՆ ՄԱՏ. ԷՑ. — Ալ ար չ'է թողու որ Վիւանն ըստ իւր քմայ փարկի, Ատենապետութեան արարողութեան համեմատ երկու Ատենապետք զրկած են Վիւանին մէջ, որ մէկին բացակայութեան միւսը փոխանակէ անոր, բայց քանի որ երկուքն մէկանց բացակայութիւնը բնական պատահեցաւ, ժողովը չը կրնար անտես տունել այս պարագան, եւ պէտք է Վիւանին բացակայ անդամոց կանխաւ ծանուցանելով յաջորդ նիստին կարգադրութեան մ'ընել այս մասին, ինչպէս երեք անգամ քացակայ եղող եւ րեսուրթսանաց համար անօրէնութիւն մ'ըրբաւ է արդէն ժողովը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Վիւանի խնդիրն յուզելով լուսաւորեցանք. երբ ասկէ առաջ ժողովը պակաս բացակայ գտնվող երեսուրթսանաց նկատմամբ անօրէնութիւն մ'ըրբաւ, մինչեւ այն ատեն ըստ որում Վիւանը այս օրինակ բացակայութիւն չ'էր ունեցեր, անոր համար մասնաւոր օրէնք չը դրաւ : Հիմա որ այս մասին ոչ օրէնք մը կայ եւ ոչ կարգադրութիւն, բան մը չ'ենք կրնար ընել, եթէ ոչ Վիւանի անդամոց բացակայութիւնն ալ խնդիր մ'ընել եւ այսօր կամ յաջորդ նիստին մեծագոյն մաս գոյացած ատեն յուզել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Իրաւ է որ կարգադրութիւն մը չը կայ դեռ Վիւանին համար, բայց ատենական կանոնները կան խնդրոց կարգին մէջ, որը ժողովը եթէ ուզէ կրնայ առաջին խնդիր ընել եւ անկից սկսիլ, որով Վիւանի համար պէտք եղած օրէնքն ալ սահմանափակ չ'ըլլայ :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Այս տեսակ թերութիւններ կը պատահին, տարակուսելու եւ վնասելու չ'է, այլ միայն պէտք է դարձանին վրայ մտածել : Վիւանի անդամոց պէտք է ազ-

դարարութիւն ընել որ ընդունայն երեսփոխան- ները ի ժողով չը հրաւիրեն, երբ իրենք ներ- կայ գտնվելու արգելք ունին: Պաշտօնապէս ազգարարութիւն մ'ընելով ըսենք Վիւանի ան- դամոց, որ ժողովը կը ցաւ իրենց բացակայու- թեան վրայ, թէ զանի հրաւիրած ատենին պա- տասխանատուութեան տակ են իրենք ալ ներ- կայ գտնվելու:

ԽՈՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Կ'ըսեն որ այս խըն- դիրը խնդրոց կարգն անցնի եւ կամ ատենական կանոնաց ծրագրին քննութեան ժամանակին վեպալարի: Այս առաջարկութիւններն այն- քան աւելորդ են, որքան ունայն են մեր միւ- շեւ ցարդ ըրած խօսքերը: Ինչորը գլխաւորա- բար ֆոխատենապետ Ազարէկեան էֆ. ի վրայ է, որ քանի անգամներէ ի վեր ժողովին ներ- կայ չը գտնվիր, որ ոչ իւր պաշտօնը կը վարէ, եւ ոչ կը հրաժարի. ուրեմն ինչ ընելու է. պէտք է հրաժարեցնել զինքը եւ ուրիշ մը ընտ- րել, որ Ընդհ. ժողովն այսպիսի մասնաւոր խըն- դիրներով չ'արգիլվի գործել:

ԵՌՆՍՈՒՖԵԱՆ Տ. ԷՖ. — Ես Այվատեան էֆ. ի առաջին առաջարկութեան պիտի յարիմ, վասն զի խնդրոցն բնական եւ սահմանադրական վի- ճակն այն է: Օղտէն էֆ. կ'առաջարկէ որ ժո- ղովը հրաժարեցնէ զֆոխատենապետ էֆ. քանի մը անգամ բացակայ գտնվելուն համար: Ասի զէչ եղանակ մ'է, մինչդեռ ժողովն այն մասին օրէնք մը չէ սահմանած, ինչպէս ֆախագեան էֆ. ըսաւ: Այս տեսակ որոշման մը առջեւ ֆո- խատենապետ էֆ. պիտի ըսէ ժողովին, ինչ զարմանալի բան, որք օրէնք կը զնէք բա- ցակայ գտնվող երեսփոխանաց համար, եւ Վի-ւանի անդամները բացառութիւն կը համարիք: Նատերը շատ կարծիքներ յայտնեցին ֆոխատե- նապետ էֆ. ի բացակայութեան վրայ, ես ալ կրնամ ըսել թէ ֆոխատենապետ էֆ. որ Թարա- պիա կը բնակի, վերջին շողենաւուն չէ հասած Պօլիս իջնելու համար, կամ թերեւս ուրիշ պատ- ճառ մը ունեցած է չը դալու եւ բացակայու- թիւնն ալ չ'է կրցած ծանուցանել: Զէ թէ զա- նի արդարացնելու մտք, այլ իրաւունքով մը տաճելով կ'ըսեմ թէ՛ ժողովն ինչպէս կրնայ ա- սանց պատճառը գիտնալու, առանց բացատրու- թիւն ուղելու հրաժարեալ կը համարվի ըսել անոր, երբ թերեւս արտաքոյ կարգի պատճառ մը կայ որ իւր բացակայութիւնը կ'արդարացը- նէ: Ինչպէս որ երեսփոխան մը ժողովոյ նա- խորդ որոշման համաձայն, առանց կանխաւ ազ- գարարութիւն իսկ ընելու, բացակայ գտնվելու

արտօնութիւն ունի, նոյնպէս պէտք է որ Վի-ւանի անդամոց բացակայութեան նկատմամբ ժողովոյ բանեցիք ընթացքը պատասխանէ ասոր. եթէ Ատենապետը չը դայ ժողովը չը կրնար անգործութեան դատադարտել. առժամանակ- եայ Ատենապետ մը կ'ընտրվի եւ ատենը կը շարունակվի, բաւական է որ ժողովակները ներկայ գտնվին: Իստեանք — Այվատեան էֆ. ի առաջարկութեան եւ խորհիւնք թէ ինչ պէտք է ընել Վիւանի անդամոց բացակայութեան համար, եթէ փոփոխենք եւ ուրիշներ զնենք, թերեւս անոնք ալ բացակայ գտնվին. ուստի կամ Ռսկան էֆ. ի առաջարկութեան համաձայն ազգային պաշտօնէց համար պէտք է երդման սովորութիւնը հաստատել, զոր ժողովը Ահմա- նագրութեան վերաքննութեան թողած է, եւ կամ Ատենապետի փոխանորդաց թիւը յաւել- ցընելու է, զոր Ահմանագրութիւնն անորոշ թողած է եւ կրնայ ի հարկին փոփոխութիւն կրել: Աւստի ատեն չ'անցնենք այսօր եւ խընդ- րոցն որոշումը յաջորդ նիստին թողունք:

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԻ ԷՖ. — Ինչպէս ժողովականաց մեծագոյն մասի բացակայութիւնը անգործու- թեան կը դատապարտէ ըզժողովը, նոյնպէս եւ Վիւանի անդամոց բացակայութիւնը մանրանը- կարն է անոր, որ ատենն բանալու կարգադ- րութեան համար ժողովոյ ժամերուն մէկ մասը կը գրաւէ: Այս տեսութեամբ էր անշուշտ որ ժողովը կարեւորութիւն ընծայեց անոր, եւ ես ալ միեւնոյն տեսութեամբ առաջարկեցի կան- խաւ յաջորդ նիստին թողուլ այս խնդրոցն որո- շումը. վասն զի թո՛ղ մեծագոյն մաս չ'ունե- նալիս, եթէ քիչ մը վերջը ունենանք ալ՝ դար- ձեալ չը պիտի կրնանք օրինաւոր որոշում մը տալ այս խնդրոցն նկատմամբ. նախ երես- փոխանաց չը ծանուցված որ եւ է՛ ինչոր ո- թոշման տակ ձգել Վահմանագրական սկզբանց չը համաձայնիր, երկրորդ՝ ինչ իրաւունքով անօրէնութիւն մը պիտի ընէ ժողովը այն ան- ձանց նկատմամբ, որք ներկայ չ'են եւ ինք- զինքնին պաշտպանելու անկարող: Իսկ երբ խնդրոց կարգին մէջ զնենք «զիւանական բարե- կարգութիւն», անոնք ալ կ'իմանան, եւ եթէ ուղեն՝ ազատ կ'ըլլան ներկայ գտնվելու եւ արդարացուցիչ պատճառներ եթէ ունին՝ մէջ բերելու. մանաւանդ որ արդէն Ատենա- պետ էֆ. Վիւանդ ըլլալը ծանուցած է, եւ ֆո- խատենապետ ու Ատենապետ էֆ. ներն ալ անց- եալ նիստէն իմացուցած են որ, եթէ կիրակի աւուր որոշվի չ'են կարող ներկայ գտնվիլ:

Երբ այսպէս ընենք, կրնանք խնդրոց կար- գին անցնիլ եւ կարեւոր վիճարանութիւններով գումարումնիս արդիւնաւէտ ընել:

ԻՆՔՈՒՆԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Ճիշդ Ատենապետ էֆ. ին պէս խորհելով ես ալ, կը կրկնեմ որ խնդրոց կարգն անցնի այս խնդիրն եւ կ'ըսեմ թէ ասոր համար մեծագոյն մասի ներկայութիւն վնասելու հարկ չը կայ այսօր:

Ժողովականաց շատին կողմէ այս մտք յայտ- նըված հաւանութեան վրայ Ատենապետ էֆ. ընդհանուրին կա՛քը կը հարցնէ, եւ կ'որոշվի զիւանական բարեկարգութեան համար յաջորդ նիստին մէջ պէտք եղած միջոցը սնորհնել, կանխաւ խնդրոց կարգն անցնելով զայն:

1. ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԻ Ը. ԵՒ Թ. ՆԻՍՏԵՐՈՒՆ

Ատենապետ էֆ. կը հրաւիրէ ժողովականնե- րը որ այս նիստերու ատենագրութեանց վրայ զխօսողութիւննին կարգաւ ներկայացնեն:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Նախ Ը. նիստին մէջ, երես 119, կաթողիկոսական յարաբերութեան Յանձնախումբին կազմութեան համար Վիւա- նին կողմէ ընտրելաց ցանկ մը ներկայացած ատեն, երեմիա Սրբազանը ես ալ կը հրա- ժարիմ ըսաւ. անկէ ետքը յարեցի թէ՛ ես ալ կ'ընդունիմ այդ պաշտօնը, երբ ժողովն ընտ- րէ: Իմ խօսքս ամբողջ կ'երեւի ատենագրու- թեան վերջին երեսը, բայց երեմիա Սրբազա- նի հրաժարականի խօսքը կը պակսի: Երկրորդ՝ Յանձնախումբին պաշտօնին մէջ էջմիածնի շայրապետի խօսք չկար, միայն Ռուսիսեան էֆ. ի խօսքին մէջն էր այն:

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՖ. — Կը գիտեմ որ ա- տենագրութեան 116 էջ. երեսը իմ խօսքիս մէջ, «իսկ չորրորդը (առաջարկութիւնը) իմն էր, որու եկած էր կարգը եւ որ մէջ խաղաց» գրված է, բայց ես խօսքս Վիւանին ուղղելով «մէջ խաղացիք» ըսի. այս կէտը պէտք է ուղղել:

ԻՆՔՈՒՆԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Յարաբերութեան խնդրոցն մէջ (երես 119) Մայր Աթոռոյ խօս- քը չը կար, եթէ լաւ ըմբռնած եմ, եւ Յանձ- նախումբը՝ որու անգամ ընտրված եմ նաեւ ես, անոր վերաբերեալ պաշտօն մը չ'ընդունեց. հե- տեւապէս չ'եմ կրնար զիս այդպիսի յանձնա- խումբի մը անդամ ճանչնալ: Մանաւանդ որ ասկէ առաջ այս խնդիրը Ընդհանուր ժողովոյ կողմէ լուծված եւ որոշված է Յանձնախումբի

մը տեղեկագրին համեմատ, զոր Ընդհանուր ժողովը ժամանակին կարգած էր, այս յատուկ պաշտօնով:

Այս զխօսողութիւնը ընելով միանգամայն հը- բաժարական կուտամ այդ Յանձնախումբէն, որուն պաշտօնը խիստ ծանր է եւ զոր չ'եմ կարող ստանձնել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հրաժարականի խօսք տե- ղի չ'ունի այս պարագային մէջ:

Այս պահուս ունկնդիր բաղմութեան մէջէն մէկը բարձրագոյ աղաղակ մը կը յարուցանէ, ժողովին մասնաւոր խնդիր մը ներկայացնելով. ժողովականք դժգոհութիւն կը յայտնեն, եւ Ա- տենապետ էֆ. ի ազգարարութեան վրայ ան- կարգութեան հեղինակը ժողովարանէն կը մեկնի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենագրութեան վրայ ես ալ զխօսողութիւն մ'ունիմ, իրր երեսփոխան: Ը. նիստ երես 110, երկրորդ խօսքս՝ որ Տ. Ամբ- բոսիոս Վարդապետի հարցման պատասխան էր, պակաս է: «Եթէ կաթողիկոսական խնդիրը Համագումար ժողովոյ պէտք չունենար, Վարչու- թիւնը եւ նոյն իսկ Ընդհ. ժողովը իւր ձեռնհա- սութենէն վեր չ'դատէր, Համագումար Եկեղեցա- կան Ժողովոյ չ'էր յանձներ խնդիրը»: այս խօսքս պէտք է եւեկալ որ յիշեալ հարցման պատաս- խանած ըլլամ:

ՄԱՋԼՈՄԵԱՆ Յ. ԷՖ. — Այդ Ը. նիստը նշանա-ւոր է ժողովին այն օրուան որոշումներով, որոց դէմ բողոքողներ կան եւ ասոնցմէ մէկն ալ ես եղած եմ, հինգ վայրկեանի մէջ խնդիր մը ձեռք առնվեցաւ

Ատենապետ էֆ. ընդմիջելով Ատենաբանը կ'ազգարարէ թէ խնդրէն կը շեղի:

ՄԱՋԼՈՄԵԱՆ Յ. ԷՖ. — Սխալ մը կայ պիտի ուղղեմ:

ՈՍԿԱՆ Յ. ԷՖ. — Ես ալ ատենանէն պզտի բա- ցատրութիւն մը պիտի խնդրեմ, եթէ կը նե- րէք խօսիմ:

Ատենապետ էֆ. յայտնելով թէ միայն ատե- նագրութեան խմբագրութեան վրայ իրաւունք ունին զխօսողութիւն ընելու, եւ ներքի չ'է այս սահմանէն անդին որոշեալ խնդիրներու դառ- նալ եւ քննադատել, թոյլ չը տար որ Ատե- նաբանք շարունակեն իրենց խօսքը:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Կը դիտեմ որ ատենադրութեան մէջ պաշտօնական լեզուէն օտար բառեր կան, ինչպէս Քաղ. Խորհուրդ Խառն Խորհուրդ եւն, ուղղախօսական բառեր, որք Ռուսինեան էֆ. ի յատուկ են, եւ որոնք մեր բերանը գրոված կ'երեւին: Մենք Քաղ. Ժողով, Խառն Ժողով գիտենք եւ այս բառերով կը հասկնանք: Ներելի չ'է այն անունները դեռ եւս չ'ընդունված պաշտօնական հրատարակութեանց մէջ անցնել, ուրիշ խնդիր է թէ Ռուսինեան էֆ. ազատութիւն ունի ինքն իր ուզած բառերովը խօսելու:

Ը. Նիստի ատենադրութեան վրայ եղած զիտողութիւնները կը վերջանան: Իսկ Թ. ի վրայ ոչ ոք զիտողութիւն կ'ընէ: Բայց ըստ որում մեծագոյն մաս չ'էր գոյացած եւ քրէի չ'էր կրնար գրվիլ, այս երկու ատենադրութեանց վաւերացումը յաջորդ նիստին թողով Ժողովն անցաւ Սահմանադրութեան ծրագրին վրայ վիճարանելու, այս մասին արված նախորդ որոշման համաձայն:

2. ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՏԵՆԱԳՐՈՒ ԷՖ. — Նախորդ նիստին մէջ ներկատելով որ Սահմանադրութեան ծրագրին յողուածոց կամ գլուխներուն վրայ եղած վիճարանութիւնները երբեմն մինչեւ հոն կը հասնին, որ ընդհանուր տրամադրութեանց կը յանգի եւ որմէ զժուարութիւններ կը ծնին, ինչպէս Փափաղեան էֆ. ալ նոր ծրագիր մը բերաւ, Ատենապետ Ստեան էֆ. ի առաջարկութեան վրայ Ժողովը որոշեց նախ Սահմանադրութեան ընդհանուր սկզբանց, ոգւոյն եւ տրամադրութեանց վրայ վիճարանութիւն մը բանալ, եւ այնուհետեւ անոր առանձին գլուխները քննութեան առնուլ, որպէս զի ընդունված սկզբունքէն եւ ընդհանուր տրամադրութեանէն չը չեղին ըլլալիք զիտողութիւնները եւ չը կնճոտին: Աւասիկ այս որոշման համեմատ ծրագրին պարունակած ընդհանուր տրամադրութեան եւ սկզբանց վրայ պիտի ըլլայ Ժողովին այսօրեայ վիճարանութիւնը:

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ ԷՖ. — Կը լիշեմ որ Սահմանադրութեան ծրագրին թաղական մատակարարութեան գլխին վրայ վիճարանութիւն եղած ատեն, այնպիսի զիտողութիւններ յերեւան եկան, որք ընդհանուր տրամադրութեանց կը վերաբերէին, եւ որոց վրայ Ժողովը վիճարանութիւն

ընտրութիւն ըրած չ'ըլլալով, չ'փոթութիւն կը ծագէր եւ կը կնճոտէր վերաբնութեան գործը: Այս պատճառներու առջեւ Ատենապետ էֆ. ընդհանուր վիճարանութիւնը իրրեւ պէտք յառաջ բերաւ, եւ ըստ այնմ որոշում արվելով խնդիրն այս նիստին ձգվեցաւ. իսկ Փափաղեան էֆ. ի ծրագիրը՝ որ երեսփոխանաց հաղորդված է, միջանկեալ առաջարկութիւն մ'էր:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Անցեալ անգամ երբ Սահմանադրութեան նոր ծրագիր մը պատրաստած ըլլալու խօսք անցաւ, երեսփոխաններէն ոմանք խնդրեցին որ տպագրվի. չնորհալու ենք Հայրենիք լրագրի խմբագիր Վարդանեան Անդրանիկ էֆ. էն որ հրատարակեց զայն իւր թերթին մէջ, զոր երեսփոխան էֆ. ներուն հաղորդեցինք անպաշտօնական կերպիւ: Այս ծրագիրը՝ ինչպէս ընթերցող երեսփոխան էֆ. ներն անշուշտ նկատեցին, Սահմանադրութեան ընդհանուր սկզբունքները, Վարչութեան դասակարգութիւնը, կազմութիւնը, իրարու յարաբերութիւնները եւ համարատուութիւնները եւ նորոգ ընտրութեան եղանակները կը պարունակէ: Երեսփոխանական Ժողովը իբր օրէնքագիր Ժողով նկատված, Վարչութեան այլ եւ այլ ճիւղերուն վերաբերեալ բովանդակ հրահանգները անոր անօրէնութեանը ենթարկված են, որոնք փորձառութեամբ հետզհետէ ուղղվելու եւ անօրինակելու պէտք ունին: Ասանկով խել մը զժուարութիւններէ պիտի ազատինք, որոց մեասը տասը տարվան փորձառութեամբ սովորեցանք: Անն ատենն բանալու պայմանը, որ մեծ խնդիր մըն էր եւ նախորդ երեսփոխանութեան օրով անլոյծ մնացած. եթէ չ'եմ սխալիր շատ կը պատահէր այն ատեն որ Ժողովն առանց ատենն բանալու կը ցրուէր: Նայնպէս Ժողովոց եւ Խորհրդոց թիւերը որոնք հետզհետէ փորձառութեամբ ամփոփվեցան: Ուստի կ'առաջարկեմ որ Ընդհ. Ժողովոց օրէնսդիր մարմին ըլլալը եւ ներքին խնդրոց կանոնները ի հարկին փոփոխելու արտօնութիւն ունենալը՝ քրէի գրի եւ որոշվի: Անցեալ նիստին մէջ բերած ծրագիրս թէ եւ քանի մը երեսփոխանաց խորհրդով եւ գործակցութեամբ պատրաստված, բայց եւ անիկայ իրրեւ պաշտօնական ծրագիր մը բռնըվելու պահանջում մը չ'ունիմ եւ ունենալու ալ իրաւունք չ'ունիմ. կը կրկնեմ թէ անի պաշտօնապէս հաղորդված չ'է երեսփոխանաց, այլ միայն Սահմանադրութեան ամփոփ եղանակը

օրինակաւ մը ցուցնելու համար պատրաստեցի, եւ յողուածոց վիճարանութեան միջոցին իմ բունելիք ընթացքս է անի: Սա ալ կը յաւելու միջ երբ վիճարանութեամբ լուսաւորվինք, ըստ այնմ պատրաստ եւք անոր պէտք եղած մասերն ալ փոփոխելու:

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ ԷՖ. — Ընդհանուր Ժողովին օրէնսդիր մարմին ըլլալը խնդիր մը ընելու հարկ չը կայ, վասն զի թէ գործադրութեան շրջանի մէջ գտնված Սահմանադրութեան եւ թէ Վերաքննիչ Յանձնախումբին նոր ծրագրին մէջ ճանչցված եւ ընդունված է Ընդհանուր Ժողովոց պաշտօնին այդ բնութիւնը:

ՔԱՋԱՋԵԱՆ Յ. ԷՖ. — Ըստ իսխիտաղէկ կ'ըլլայ խնդիրը գործնական կերպով մտածվի եւ որոշվի: Ազգը փորձառութիւն չ'ունենալուն չը կըրցաւ գործադրելի օրէնք մը չ'ինել, եւ այս պատճառաւ անիկ սպասված արդիւնքը երեւան չ'եկաւ: Ազգային կառավարութիւնը իբր ընտանեկան կառավարութիւն մը նկատելով, պէտք է պարզ դրութեան մը հետեւիլ: Եթէ օրէնսդիր Ժողով մը ունեցած ըլլանք եւ ենթադրենք թէ երեսփոխանական Ժողովն է այն, զարձեալ պէտք է որ հաւասարակշռութիւնը անեղծ պահելու եւ Ժողով մը ընելու համար ուրիշ մարմին մը ունենանք: Վերացական գաղափարները թէ եւ երեւոյթով աղէկ կը թուին, բայց գործադրութեան մէջ պակասաւոր են: Աւելի աղէկ կ'ըլլայ գործնական միջոց մը գտնել, պարզ կառավարութիւն մը կազմել, որպէս զի Ազգին բաղձանաց՝ որ մենէ գործ կը պահանջէ, կարող ըլլանք պատասխանել: Խօսքս կ'ամփոփեմ ըսելով, եթէ Ընդհանուր Ժողովը միայն օրէնսդիր Ժողով մը ընենք, ազգային գործոց կառավարութեան համար ուրիշ Ժողով մը զնել հարկ պիտի ըլլայ, որ գործադրական գաղափար մը չ'երեւիր ինձ: Ժողովը եթէ աւելի գիւրգործադրելի եղանակ մը մտածէ, մեծ ծառայութիւն մը ըրած պիտի ըլլայ Ազգին: Իսկ Սահմանադրութեան ծրագրին գալով խիստ գեղեցիկ գործ մ'է, թէ եւ պակասութիւններ ալ ունի քանի մը կէտերու մէջ, որոնց վրայ պիտի խօսինք ի հարկին. հիմայ ընդհանուր սկզբանց վրայ է վիճարանութիւնը, ուստի տեսութիւնս ընդհանուր էր:

ՔԻԻՐՔՃԻՊԱՇԵԱՆ Բ. ԷՖ. — Փափաղեան էֆ. ի առաջարկութեան համաձայն եմ, Ընդհանուր Ժողովը օրէնսդիր Ժողով մը պէտք է ըլլայ եւ իւր գրած օրէնքները սրբագրութիւններ չը կրնն:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այլատեան էֆ. կ'ըսէ որ երեսփոխանական Ժողովը արդէն օրէնսդիր մարմին մ'է, բայց անիկայ մինչեւ ցարդ ընտրութիւններէ զատ ուրիշ բանի պարագայ չ'է: Անգամ մը երուսաղէ մի վանուց ներքին կանոնսդիրը չ'ինեց, եւ ուրիշ անգամ մ'ալ Քաղաքական Ժողովոց համարատուութեան շտեղկագիրը առաւ: Իմ ըսածս այս է որ, երբ Ընդհանուր Ժողովը իբր օրէնսդիր Ժողով նկատենք, Սահմանադրութեան մէջէն խել մը բաներ գուրս պիտի ելնեն: Ընդհանուր Ժողովը ինք պիտի խմբագրէ Գաւառական Վարչութեանց կանոնները, ինք պիտի որոշէ Քաղ. Ժողովոց անգամոց թիւը եւ պաշտօնավարութեան եղանակը. հերիք է որ Սահմանադրութեան մէջ կազմութեան եղանակին սկզբունքը նշանակված ըլլայ օրինաւորութեան համար, կտրուկ եղանակ մը որ կիսովին Սահմանադրութիւնը պիտի համառօտէ: Վերաքննութեան ծրագիրը մասնապետներ, տասնապետներ հարկւրապետներ գրեր է, թերեւս օր մ'ալ եռապետներ ծնին ասոնցմէ. ինչ հարկ կայ ասոնց: Սահմանադրութեան մէջ պէտք է սկզբունքները գծված ըլլան եւ այս միայն ներկայանայ Բ. Գրան. իսկ երեսփոխանութիւնը ինքնիշխան ըլլայ եւ կարող օրէնքներ զնելու. քանի որ արդէն Տէրութիւնը մեզի ի վաղուց արտօնութիւն տուած է մեր ներքին գործերը անկախութեամբ անօրինակելու:

ՆԱՅԱԳԱՋ ՍՐԲԱՋԱՆ — Սահմանադրութեան նոր ծրագիրը եւ ալ կարգացի, եւ այնքան շատ որ հինցուցի զայն. թէ եւ անոր խիստ խորը թափանցելու հանձար չ'ունիմ, բայց Փափաղեան էֆ. ի առաջարկութեան խելամուտ եմ եւ կ'ողովեմ ընդհանուր տեսութիւն մ'ընել: Արդարեւ փափաքելի է որ Ընդհանուր Ժողովը իւր վստմութեան վայել հեղինակութիւն ունենայ իբր օրէնսդրական բարձրագոյն ատենն մը, բայց մենք ինչպէս ամենօրեայ փորձերը ցոյց կուտան, քանի որ խօսքերն ու խնդիրները ստեղծ կը փոփոխենք, ազգային գործերը օրէնսդրական անվերջանալի փոփոխութեանց պիտի մասնավին առաջարկված դրութեամբ: Եթէ Ժողովը վստատահ է թէ ունի հաստատամիտ, անփոփոխ եւ բարձր գլուխներ, թող իր հեղինակութեան վերապահէ ամեն բան եւ իր ձեռքին մէջ ամփոփէ, եթէ ոչ՝ միշտ կազ եւ կ'ալ պիտի ըլլայ:

Ահա այս մտածմամբ կ'ըսեմ որ մեր Սահմանադրութիւնը պէտք է օրինաց ամեն մասունքները պարունակէ եւ վաւերացած ըլլայ: Ես

Թագ. Խորհուրդներ կը յիշեմ որ ազգային խնդիրները մինչեւ Բ. Գուռը հասուցին : Թէ որ Սահմանադրութեան մէջ այսպէս մասնաւոր կանոնները գրված չ'ըլլան, այն ատեն առի զէնք մը պիտի ըլլայ շատերու ձեռք եւ մի եւնոյն գէպքը յաճախ պիտի պատահի : Եթէ Ժողովը այս երկուքները չ'ունի, կը հաւանիմ եղած առաջարկութեան :

ՈՍԿԱՆ Յ. ԷՖ. — Փափազեան էֆ. ըսաւ որ Ընդհանուր Ժողովը իբր օրէնսդիր ժողով նկատվի, եւ Այլատեան էֆ. պատասխանեց թէ անի այդ պաշտօնը ունի արդէն Ի սկզբան երբ Սահմանադրութիւնը հաստատվեցաւ կը յիշէք թէ ինչ կեղտ անուէն կ'առնէր անոր մէջ փոփոխութիւն մտցնել ուղղու. անոր գործադրութիւնը երեսփոխանական Ժողովին յանձնած էր Ազգը, անկախ անոր օրէնսդրական խորհրդածութեանէն. եւ հիմա որ օրէնսդիր ժողով մ'է կ'ըսվի, պէտք է որոշել թէ իրօք այսպէս է թէ ոչ :

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՖ. — Այս վիճարանութիւնը Վերաքննիչ Յանձնախումբին ծրագրին ընդհանուր տրամադրութեանց վրայ պիտի ըլլար, բայց կը տեսնեմ որ մինչեւ ցարդ եղած զիտօղութիւնները այս նպատակին չ'են պատասխաներ, այլ մասնաւոր յօդուածոց, կամ պաշտօններուն հանգամանաց կը վերաբերին : Երբ մէկը ելնէ եւ ըսէ թէ Սահմանադրութեան մէջէն Ընդհանուր Ժողովը պէտք է վերնայ, կ'ըմբռնեմ թէ ընդհանուր տրամադրութեան վերաբերեալ բան մը կը խօսի, ինչպէս էր Գաղազեան էֆ. ի զիտօղութիւնը + միջոց մը հաստատուելու մասին : Սակայն Ընդհանուր Ժողովոյ պաշտօնը սահմանել՝ ընդհանուր տրամադրութեանց վերաբերեալ չ'է : Ես ընդհանուր տրամադրութիւն ըսելով այսպէս կը հասկնամ. Ազգ. Վարչութիւնն երեք ճիւղ ունի, կեդրոնական, գաւառական եւ թաղական. կեդրոնականը երկու խորհուրդ ունի, կրօնական եւ քաղաքական. նմանապէս գաւառականը եւն. ասոնք ինչպէս կ'ընտրվին, որոցմով կը բաղկանան, ինչպէս կը հրաժարին. կամ Պատրիարք, առաջնորդ եւն, ինչ է իրենց պաշտօնը, ինչպէս կ'ընտրվին եւ ինչպէս կը հրաժարին. ասոնք են ահաւասիկ ընդհանուր տրամադրութեան վերաբերեալ կէտերը : Անցեալ անգամ Առնապետ էֆ. ի առաջարկութեանէն ալ այսպէս հասկըցայ, բայց հիմակվան խօսքերը ընդհ. տրամադրութեանց վրայ չ'են, եւ նոր ծրագրի մը վրայ կը դառնան. Վերաքննիչ Յանձնախումբին ծրագրի ժողովէն ընդունված է ար-

դէն, եւ ես խիստ ըսած եմ թէ գերազանց առաւելութիւններ ունի առաջնոյն վրայ. ուրիշ է թէ մէջը պակաս մնացած բան մ'ալ ըլլայ, այն ալ կրնայ յաւելնալ, եւ եթէ աւելորդ կայ՝ համառօտվի. հարկ չը կայ այսպէս անօղուած մասնակ անցնելու :

ԶՐԱՔԵԱՆ Գ. ԷՖ. — Ահաւասիկ հինգ նիստ, յորմէ հետէ պատիւ կ'ունենամ երեսփոխանական Ժողովոյ ներկայ գտնվելու : Այս միջոցին Սահմանադրութեան վերաքննութիւնը սկսած է կատարվիլ, եւ ես իմովսանն սա միայն կրցի գիտել թէ՛ Հայրենիք լրագրին մէջ հրատարակված ծրագրի մը որ փափազեան էֆ. ինն է, ամ փոփ է եւ կատարեալ. իւր պարզութեամբն ամենուէն մատչելի պիտի ըլլայ, մանաւանդ մեր գաւառական ազգայնոց. միայն քանի մը տեղեր մթին կերպով գրված է, կ'ազաչեմ որ փափազեան էֆ. չ'նորհ ընէ զանոնք եւս բացատրել եւ ընդարձակել, եւ եթէ ուրիշն է հեղինակը՝ անոր ընել տալ այս գործօղութիւնները, որպէս զի գաւառներու մէջ Սահմանադրութեան գործադրութիւնը բոլորովին զիւրանայ :

ՄԱՋԼԸՄԵԱՆ Յ. ԷՖ. — Որոշվեցաւ նախապէս Սահմանադրութեան ընդհանուր տրամադրութեանց վրայ վիճարանիլ եւ այնուհետեւ մասնաւոր յօդուածոց անցնիլ, զանոնք ընդունիլ կամ մերժել. շատ աղէկ եղաւ այս որոշումը : Վերաքննիչ Յանձնախումբին ծրագրի նկատօղութեան առնելով կը տեսնեմ որ, սկզբանց մասին միայն խմբագրական տարբերութիւն մ'ունի գործադրութեան մէջ գտնված Սահմանադրութեան քով. միայն թէ Յանձնախումբը մեծ սկզբունք մ'ալ, սահմանադրական ազգի մը յատուկ սկզբունք մը, յաւելցուցեր է ըսելով թէ՛ Հայերը հաւասար են վարչութեան առջեւ : Այս կէտին համար իմ մասնաւոր շնորհակալութիւնս կը յայտնեմ Յանձնախումբին : Իսկ Այլատեան էֆ. ի ըսածին համեմատ գիտելով վարչական կազմակերպութիւնը՝ կը տեսնենք թէ կեդրոնական վարչութեան վրայ ձեւված է գաւառականն ու թաղականը. ինչ որ ունի կեդրոնականը՝ նոյնն ունին եւ ասոնք. իրիսա բնական կարգով մը սահմանված է՝ նաեւ համարատուութիւնն ու անոր եղանակը, Ընդհ. Ժողովոյ պաշտօնը մանրամասնօրէն նշանակելով : Այս ընդհանուր ձեւին համար ես գիտօղութիւն մը չ'ունիմ, եւ համոզված եմ որ այս է բնական ճամբան :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այլատեան էֆ. ըսաւ որ Ընդհ. Ժողովը իբր օրէնսդիր ժողով նկատե-

լու խնդիրը ընդհանուր տրամադրութեանց չը վերաբերիր, բայց վերջը ճշդեց իւր փոսքը բնակով թէ՛ ընդհ. տրամադրութեան կը վերաբերի ազգային վարչութեան ժողովոց գասակարգութիւնը, եւ թէ ծրագրին աւելորդ մասերը կրնան համառօտվիլ : Ըսել է սկզբունքով համաձայն ենք ամենքս ալ Սահմանադրութեան ամփոփ ըլլալուն վրայ, որ մեր գործը կը զիւրացնէ : Պէտք է որ յիշենք թէ պատմութեան մը նիստի մէջ անօղուած վիճարանութիւններով զրազեցանք :

Երևմտա Սրբազանին պատասխանելով, եթէ կը ներէ, կ'ըսեմ թէ՛ ինչպէս նախորդ նիստի մէջ Թագ. Խորհրդոց անհաւատարմութեան զէնք առնելու համար մէկ մէկ եկեղեցական տեսուչ կարգել կարեւոր համարեց, նոյնպէս եւ փոփոխափա երեսփոխաններ չ'ունենալու համար կրնայ առաջարկել որ, բոլոր երեսփոխանութիւնը եկեղեցականներէ բաղկանայ :

ԻՌԹԻՆՃԵԱՆ Կ. ԷՖ. — Իբր անգամ Վերաքննիչ Յանձնախումբին կ'ուղեմ անոր ծրագրին վրայ եղած վիճարանութեանց ինչ ինչ կէտերուն համառօտիւ պատասխանել :

Ի սկզբան Յանձնախումբը այն կարծիքը ունէր՝ զոր փափազեան էֆ. կը յայտնէ հիմայ, այսինքն Սահմանադրութիւնը երկու մասի բաժնելով՝ առաջնոյն մէջ հիմնական եւ օրինական կանոնները դնել, եւ երկրորդին մէջ գործադրական ու մասնաւորները, առաջին մասը Բ. Գրան վաւերացման ենթարկել, իսկ երկրորդը Ընդհանուր Ժողովոյ օրէնսդրական հեղինակութեանը վերապահել, որպէս զի Ընդհ. Ժողովն արտօնութիւն ունենայ փոփոխելու այն գործադրական եւ մասնաւոր կանոնները՝ որոց մէջ Ժողովն արդի գրութեամբ նշանակեց մ'անգամ չ'էր կարող փոփոխել եւ կաշկանդեալ կը մնար, Սահմանադրութիւնը գլխովին Բ. Գրան վաւերացմանը ենթարկեալ ըլլալուն համար : Այսպէս մտածեց Յանձնախումբը եւ սկսաւ իր պաշտօնը. սակայն երբ կարգը եկաւ օրինական եւ գործադրական մասերը բաժնելու, այն ատեն Յանձնախումբը զժողովութեան առջեւ տեսաւ զինքը, եւ պարտաւորեցաւ կանգ առնուլ մտածել թէ՛ որ մասը օրինականին եւ որը գործադրականին մէջ հարկ էր դետեղել : Յանձնախումբը չը կրցաւ զանոնք զատել եւ ի մի ձուլել պարտաւորեցաւ, զի գործադրական համարված մասերը առ հասարակ սերտ կառակցութիւն ունէին օրինա-

կանին հետ : ապիտք գաւ եթէ Ընդհ. Ժողովը ինչպէս Յանձնախումբը մտածէր էր, գործադրական մասի փոփոխութիւնը առնել տարեկրի կատարէր եւ օրինականները վերաքննութեան սահմանեալ ժամանակին թողուր, այնքան շատ էին գործադրական կէտերը, որ Յանձնախումբը փոխցաւ թէ Ընդհանուր Ժողովը փոխանակ օրէնքին գործադրութեան գրառելու, իւր նիստերը անօղութեամբ գրութեան պիտի գտնէր : Աւստի միայն մասնաւոր խորհրդոց օրէնքներն անոր թողելով, մնացած մասերը ծրագրին մէջ առնելու որոշում տուաւ Յանձնախումբը :

Իսկ երեսփոխանական Ժողովը օրէնսդիր մարմին մ'է թէ ոչ, տարակուսիլ պէտք չ'է, փորձը կը ցուցնէ զայդ յայտնի կերպով :

ԽՅՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Երբ վէճ մը բացվեցաւ երեսփոխանական Ժողովին օրէնսդիր մարմին մ'ըլլալուն կամ չ'ըլլալուն վրայ, իւր թիւճեան էֆ. ի յանուն Յանձնախումբին խօսածները ստոյգ են. Յանձնախումբը առաջարկված սկզբան վրայ ուղեց ընթանալ, բայց գործադրութեան մէջ զժողովութիւն տեսաւ, եւ միայն այն կէտերը գուրս ձգեց որ պարզ հրահանգներ էին, ինչպէս ծրագրին վերջին յօդուածին պարունակութիւնը կը հաստատէ զայս, երբ կ'ըսէ թէ՛ « Ազգային Սահմանադրութեան հիմնական սկզբունքն անփոփոխելի են, բայց անոնց օրէնսդրական տրամադրութիւնը միայն, որք հարկեր յօդուածօք բովանդակեալ վերաքննելի են » :

« Եթէ կիրառութիւնը հարկաւորութիւն ցուցնէ աւելի ընդարձակութեան կամ անորոջական բացատրութեանց, զորս այս օրինական յօդուածը չ'են կրնար պարունակել, Ընդհանուր Ժողովը կրնայ զայն ընել՝ երբ որ ալ ըլլայ, հետեւելով միշտ Սահմանադրութեան տիրօղ սկզբանց, եւ իրրեւ հրահանգ յաւելուածով մը առաջ զայն գործածական մանրամասնիկ յօդուածները » :

Կը հետեւի ուրեմն թէ այն սկզբունքը որուն վրայ կը խօսինք, ընդունված է արդէն եւ անոր վրայ վիճարանիլ աւելորդ :

Բայց անցեալ նիստին մէջ եղած որոշման վերայ սա գիտօղութիւնը՝ ունիմ թէ՛ երբ ճշրագիրն եկաւ Ժողովին, ապեալ տեղեկագիր մ'ուղեմ հետք, որ ընդհանուր տրամադրութեանց վրայ կը խօսէր արդէն եւ զոր Ժողովը ծախհարութեամբ ընդունեց. այնուհետեւ երբ այժմ ընդհանուր տրամադրութեանց վրայ վիճա-

բանութիւն կը բանանք, բայց է ժողովն ան-
տարակոյս առանց համոզման տուած է իւր
քրէն եւ սխալ մը գործած: Աւստի կ'առա-
ջարկեմ որ ժողովը պահ մը ետ առնու իր քր-
էն, ու նախ որոշէ թէ որո՞նք են ընդհանուր
տրամադրութեան հիմունքը, որպէս զի կարե-
ւի ըլլայ վիճաբանիլ անոր վրայ:

ՋՐԱՔԵԱՆ Գ. ԷՖ. — Քիչ մը առաջ չ'ուզեցի
երկար խօսիլ, վստահելով որ Վերաքննիչ Յանձ-
նախմբին ծրագրին վրայ դժգոհութիւն յայտնած
կ'ըլլամ: քաւ լիցի: Փափազեան էֆ. ի ծրագրին
հաւանեցայ, վասն զի աւելի դիւրագործածելի
եւ գաւառացի ազգայնոց հասկնալի գտայ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կ'ուզէի Օգսէն էֆ. ի
պատասխանել, եւ ինք հոս չ'է թէ եւ, բայց
ես իմ պարտքս կը կատարեմ:

Ինչի՞րը կը ճապաղենք. իմ նպատակս գործ-
նական ճամբու դիմել է: Օգսէն եւ Իւթիւճեան
էֆ. ներքէ իրր Յանձնախմբի անդամ պարտաւոր
էին պաշտպանել իրենց ծրագիրը. բայց խճող-
եալ սահմանադրութիւն մը սրբագրելը՝ երկար
ժամանակի պէտք ունի. մանաւանդ երբ
բառախաղութեան մէջ ալ լիցնանք, ինչպէս
եղաւ մէկ երկու անգամ: Երկրորդ՝ Բ. Գոնէն
վաւերանալու համար ալ երկար քննութեան
պիտի ենթարկվի:

Ահա այս մտք Սահմանադրութեան ծրագրին
պարզութիւնը առաջարկեցի, եւ օրինակի հա-
մար պատրաստված համապատ Ծրագիր մը մէջ
բերի:

ՔԻՆՎԵՃԻՊԱՇԵԱՆ Բ. ԷՖ. — Կը խնդրեմ Գի-
ւանէն որ վիճաբանութեան նիւթերը կարգադ-
րէ, եւ զմեզ այս դժուարութենէն ազատէ:
Երկու ծրագրի խօսք կայ, ո՞րը քննութեան
պիտի առնուք, նախ այս որոշվի:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱՋԱՆ — Ժողովին գործը Վերա-
քննիչ Յանձնախմբին ներկայացեալ ծրագիրը
քննել է. երեսօխմանք անոր վրայ խօսելու
իրաւունք ունին, բայց արտօնութիւն չ'ունին
մէկ մէկ նոր ծրագիր շալկել բերելու: Այսօր
Փափազեան էֆ. քանի մը երեսօխմանաց խոր-
հրդակցութեամբ ծրագիր մը շինեք է, վաղն
ալ ուրիշ մէկը կը շինէ, եւ այն ատեն հարկ
կ'ըլլայ քանի մը տարի այս ծրագիրներուն վրայ
խօսիլ: Եթէ ժողովն այս դրութիւնը ընդունի,
յաջորդ անգամուն ես ալ ծրագիր մը խմբագ-
րելով կը բերեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սահմանադրութիւնը քանի
որ քննութեան տակ է, ամեն երեսօխման ի-
րաւունք ունի իր գիտօղութիւնը թէ՛ բանիւ
եւ թէ՛ գրով ընելու: այս իրաւանց յենեալ
Փափազեան էֆ. իւր գիտօղութիւններն ամբողջ
բերեք է ծրագրով մը, ինչպէս բոլոր երեսօխ-
մաններն ազատ են այսպէս իրենց գիտօղու-
թիւնները թէ ամբողջապէս եւ թէ բովանդա-
կապէս ժողովոյս բերելու:

ԱՏԵՆԱԳՊԵՐ ԷՖ. — Ամանք սխալ ըմբռնեցին
խնդիրը, եւ չ'իտի վիճակի մը մէջ գրին զայն.
ուստի խօսք կ'առնու մ' պարզելու համար:

Թէ եւ Փափազեան էֆ. ծրագրէ մը սխալ

խօսքը, բայց եղբակացութիւնը սա էր թէ՛ Ընդհ.
Ժողովոյ օրէնսդիր մարմին ըլլալն որոշվի նա-
խապէս, եւ Սահմանադրութիւնը օրէնքին
հիմնական մասերը միայն պարունակէ, մնաց-
եալներն Ընդհ. Ժողովին թողելով. բայց չ'է
թէ Սահմանադրութեան վերաքննութիւնը իր
ծրագրին վրայ կատարվի, Յանձնախմբի մը իր
մնայով: Այսպիսի առաջարկութիւն մը ժողովը
չ'էր կրնար ընդունիլ արդէն, վասն զի իւր
գործը՝ ինչպէս բացատրեցի կանխաւ, Սահմա-
նադրութեան ընդհանուր տրամադրութեանց
վրայ վիճաբանիլ է այսօր, յորմէ ետքը պիտի
սկսի Յանձնախմբին ծրագրին յողուածները զը-
լուխ առ զլուխ քննելու ըստ իւր նախորդ որոշ-
ման Աւրիմն յայտնի է թէ՛ երբ մենք այս սահմա-
նէն խօսարկեք. եւ խօսքերն իս նոր ծրագրի կամ
անոր ներկայացմանը վրայ մասնաւորելը, մեր
նպատակէն կը շեղինք եւ մեր վիճաբանութիւն-
ներն ապարդիւն կ'ըլլան:

Գառնալով մեր խնդրոյն փոփոխեան էֆ.
առաջարկութիւն մ'ըրաւ, եւ Վերաքննիչ
Յանձնախմբի անդամ Իւթիւճեան եւ Իօճա-
սարեան էֆ. ներու կողմէ ալ պատասխան կամ
բացատրութիւններ արվելան իրեն թէ՛ Յանձ-
նախմբն ալ ի սկզբան Սահմանադրութեան
յողուածները հիմնական եւ գործադրական եր-
կու կարգի բաժանելու կարծիք ունի եղեր,
բայց ասոնց սերտ կապակցութիւնը դժուար-
ութիւններ յարուցեր է բաժանման ատեն:
Իօճասարեան էֆ. նաեւ ընդհանուր տրամադ-
րութեանց վրայ վիճաբանելու որոշման մասին
գիտօղութիւն ընելով առաջարկեց որ, ժողովը
Վերաքննիչ Յանձնախմբին Լտեղեկագրին հա-
մար առած քրէն պահ մը ետ առնու: Աւստիկ
այս առաջարկութիւններն ունինք մեր առջեւ:

Բայց ըստ որում դեռ եւս մեծագոյն մաս
չ'ունեցաւ այսօր ժողովս, եւ օրն արդէն աւարտ-
ժամած ըլլալով ալ եւս ունենալուն ալ յոյս
չը կայ, եւ հետեւապէս եթէ լուծման կէտին
հասած խնդիրներ ալ գտնվին որոշում չը
պիտի կրնան առնուլ, եւ կ'առաջարկեմ որ
այսօրուան նիստին արտադրած կարծեաց լու-
սաւորութիւնը բաւական համարէ ժողովս, եւ
յաջորդ նիստին օրը որոշվելով ատենաւր վեր-
նայ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կը հերքեմ երեսիա
Սրբազանի ըսածները. պաշտօնապէս ես ոչ ծը-
րագիր չ'ինած եւ ոչ ալ ներկայացուցած եմ.
եւ եթէ ատենաւր պիտի գոյվի, կը խնդրեմ որ
այս խնդրոյն վրայ յաջորդ նիստին առաջին
խօսքն ինձ տրվի:

Ատենադպիր էֆ. ի առաջարկութեան վրայ
յաջորդ նիստին օր կ'որոշվի յառաջիկայ Յուն-
վար 13, ուրբաթ, եւ Ատենապետ էֆ. ատենաւր
կը վերջընէ ժամ 9 1/2 ին:

ՓՈՒՍԵՆԱԿ ԱՏԵՆԱՊԵՏԻ ԱՏԵՆԱԳՊԵՐ
Ք. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Յ. Հ. ՄԷՐԵՆՄ-ԳՈՒՂԻ

ՅՈՒՂԻ Ե ՅՈՒՂ

ՅՈՒՂԻ Ե ՅՈՒՂ

Կ'ուզէի օրէնսդիր մարմին ըլլալն որոշվի նախապէս, եւ Սահմանադրութիւնը օրէնքին հիմնական մասերը միայն պարունակէ, մնացեալներն Ընդհ. Ժողովին թողելով. բայց չ'է թէ Սահմանադրութեան վերաքննութիւնը իր ծրագրին վրայ կատարվի, Յանձնախմբի մը իր մնայով: Այսպիսի առաջարկութիւն մը ժողովը չ'էր կրնար ընդունիլ արդէն, վասն զի իւր գործը՝ ինչպէս բացատրեցի կանխաւ, Սահմանադրութեան ընդհանուր տրամադրութեանց վրայ վիճաբանիլ է այսօր, յորմէ ետքը պիտի սկսի Յանձնախմբին ծրագրին յողուածները զըլուխ առ զլուխ քննելու ըստ իւր նախորդ որոշման Աւրիմն յայտնի է թէ՛ երբ մենք այս սահմանէն խօսարկեք. եւ խօսքերն իս նոր ծրագրի կամ անոր ներկայացմանը վրայ մասնաւորելը, մեր նպատակէն կը շեղինք եւ մեր վիճաբանութիւններն ապարդիւն կ'ըլլան:



ԴԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Կը ծախվի ի Դիւանատան Պատրիարքարանի ի Ղալաթիա ,
եւ կը գտվի ամեն գրավաճառաց քով և Եկեղեցեաց բանկալիները :